



17. ԾԱՀ-ՄՈՒՐԱԴԵՆ ՆԱՂԱԾ

Մին թաքավըերու քառասուն տղա յա ինժնմ, օզում ա քառասունն էլ փսակե: Շոռ ըն կյամ, շոռ, հունց թաքավըեր շըն քթենժնմ, վըեր քառասուն ախճիգյ ինի (ավալի վախտըերթը թաքավըերնն տղեթյը թաքավըերնն ըխճըկորանց նըն իլալ ուզելիս): Մտածում ըն, մտածում, վերլը մին օր լոխ ծիյըվըերվում ըն, զինքերը յոր օնում, ուրանց թըղաքան տոնս կյամ, վըեր քյինան օրիշ երգիիրներում շոռ կյան, հունց թաքավըեր քթենան, վըեր քառասուն ախճիգյ ինի, օզըն, ետ տըեռնան:

Երեսումիննց ախպերթը վըեր տանան տոնս ըն կյամ, կումուք ախպորը՝ Շահ-Մուրադին, մարը թողում շի, վըեր նհըտնընք քյինան, ասում ա կումուք ա, կարել շի երկան հըղբցու, տիժար տըղերու տեմ կենաւ:

Շահ-Մուրադը թըղաքան տոնս ա կյամ, ըսկսում մին պըռավու հըվըերու քարավ տալը: Էտ պառավն էլ թա՝ վըեղըս կլիմըտ, երեսունիննց ախպերթը քյեցալ ըն կորչին, վըեր լավ ինիր, տու վըել նհըտնեն կըթյինիր կուրշիր:

Շահ-Մուլրադը էտ խոսկերքը վլրեր ըսկանում ա, վաղ ա տամ
մորը կոշտը, պեսին թահը հըրցընում, ամմըն հինչ գյուղնում
(ախպըներքը ըսկի ուրան թավ ընելիս էլ ըն իլաւ), ծին յիշարում,
շաշկան կապում, հըտքըներան քյիշամ: Շատ ա քյինամ թա խրեգի,
հըորցանա եշում ա, տըեսնում ուրան ախպըներքը մին տան հըվաք-
ված, ուրիսոթում սարքած, քյեփ ըն անում, օտում-խմում, զարա-
փաթես անում: Շահ-Մուլրադն օզում ա թա տահանց անա մուտա-
նա, տըեսնում ա՝ հըորցանա մին հենգի կլխանե օշափ բիդի տա-
հանց մուտանում ա: Թիսում ա տրա կըլխընեն կտրում-ըսպանում,
թթըպոշը կտրում, քցում խուրչինը: Տրանա ետը մինգիել վեց
կլխանե մին օրիշ օշափ ա կյամ: Թիսում ա, տրա կլխընեն էլ կտո-
րում, ըսպանում, էլլա թթըպոշը կտրում, քցում խուրչինը: Օխտը
կլխանե մին օրիշ օշափ էլ ա կյամ: Տրա յել ա ըսպանում, թթը-
պոշը կտրում, քցում խուրչինը: Տրանա ետը ծին նստում ա,
խուրչինը ծիյավը քցում, քյինամ նի մննում մին մուտք տոն, թա
միւրք ճնկը օզրե, երեսը նան ծըեռքերը լուվանա: Բներդան եշում
ա, տըեսնում էտ տանը մին լըտքեսնված հուրի-փայրի ախճիգի,
էլ ամմըն հինչ մննան քցում ա: էտ ըխճըկանը հըրցընում ա, թա
հու վը՞ս, տա թա՝ էսհինչ թաքավըներն քառասում ըխճըկորանցը
քուրն ըմ, քառասումավ էլ իրեք դուվըներն քշտին պլեն ինդյած
ընք:

Շահ-Մուլրադը կլխու վա ինգյանմ, վլրեր էտ իրեք դժվըները
ուրան ըսպընըծնեն ըն, տա ամմըն հինչ էտ ըխճըկանը քշտին
ասում ա, տրա մուտանան յոր օնում, քցում ուրան մաննը,
քվորցը մուտընեթյն էլ յոր օնում, քշերեն կեսումը տանում թա-
քում քցում ախպորցը մըննըրնեն (ախպըներքը քոն իլած ըն ինում),
մընեծ ըխճըկանը մուտանան քըցում ա մընեծ ախպորը մաննը,
մաշնակը մըշնակըն, տի՝ ամենքյա ուրանց յաշին, ուրանց քա-
րեն:

Եթյուը ախպըներքը եր ըն կենում, տըեսնում Շահ-Մուլրադը
հուրանց կոխսկըն քոն իլած, ուրանց լոխմինին մըննըրներումն էլ
մին-մին մուտանա: Հըրցընում ըն, թա՝ Շահ-Մուլրադ, խեր ինին,
հինչ ա՝ պըտահալ, վլրեր եկալ ըս:

Շահ-Մուլրադը թա՝ ես ըմ ծըեզ մահա պըրծըցըրալ, հըրցը-
նում էլ ը՞թ, թա հինչ ա պըտահալ: Տահանը հըվատում լըն: Շահ-
Մուլրադն ասում ա.—Խուրչինը դրաղ տիրան ա: քյեցեք պերեք,
ամմըն հինչ կըդլիդաբ: Մին-մին քյինամ ըն թա պիրին, կարում
շըն, ըրըկ-էրկու վըն քյինամ, կարում շըն, իրեքավ-շորսավ էլ
շըն կարում: Բնելը մենակ քյինամ ա խուրչինը յոր օնում պիրում,

ուշը փետրեն թըթըպողնեն վըեր ածում, թա՝ սահանք ըն իւալ
երեր թըթըրներեն տակըն, զիդալիս լըթ իւալ: Տրանա ետը տա-
հանք թա՝ Շահ-Մուրադ, տու օրաս տենը մըեր մըեծ ախպըերե
ըս, մունք լոխ քու խոսկավըտ ընք քյիննական, հինչու վըեր
ասրես, լոխ քու խոսկըետ ընք անջուկ ուննական:

Շահ-Մուրադը տահանց թողում ա տըեղ, քյիննամ թաքավըե-
րեն քառասուն ըխճկեթյը պիրում, վըեր տանըեն ուրանց հորը
կոշտը՝ հրսանների անըեն: Բնիւրդան հշում ըն, տըեսիում հըռըցա-
նա մին օրիշ պեն ա կյամ՝ կեսը խոզ, կեսը մարթ: Տա տահանց
վըեր մուտանում ա, ախպըերքը օզում ըն ըսպանեն, Շահ-Մու-
րադը թողում չի: Տա վըեր լափ մուտանում ա, Շահ-Մուրադին
ասում ա.— Քյիննալ պիտիս էսհինչ ծուվավն անց կենաս, էսհինչ
թաքավըերեն ախճիյըն ինձետե պիրիս: Ախպըերքը նորից ըն
օզում, թա տրա նհետ կոն անըեն ըսպանըեն, Շահ-Մուրադը թողում
չի, ուրան թիւլըկան ծին նոտում ա, քյիննամ էտ ծուվավն անց
կենում, ծուվըեն էն զոլին տըեսնում մին պառավ կնեղի ուրան
տանն ըռաշին նստած: Տա թա՝ աղի, աղի, ինձ զոնադ լը՞ յո՞
օնքիլ: Տա թա՝ աղին քի մատաղ, հինչա՞վ զոնադ անըեմ, վըել
ուտելի օնըեմ, վըել խւըելի: Տա թա՝ վըեր փող տամ, կըկարըե՞ս
ինձետե ուտըելի տես-տեն ինքի օնըես: Էտ պառավը թա՝ կըկա-
րըեմ: Տուն ա օնում մին հափուտ վըեսկե տամ, պառավը քյիննամ ու
տես-տեն ինքի օնում, վըեսկուն կեսն էլ մեամ ա ուրան: Ուտըե-
լան-խմըելան ետը Շահ-Մուրադը հըրցընում ա, թա՝ աղի, պա
հինչավ ը՞ս ապրում: Պառավը թա՝ թաքավըերեն ըխճկանը
տում ըմ օնում էն դրմն բաղումը շոռ ածում: տա, մինդյել ուրան
զուլուու ընողնըեն հացա-մացա տամ ըն: օտում ըմ: Շահ-Մու-
րադը դմաստին մաննը կծում ա, կիսու վա ինգյում, վըեր տա
հենց ուրան շոռ կյալիս ախճիգին ա: Մին հափուտ վըեսկե յել ա
տամ, թա՝ աղի, կըկարը՞ս էտ ըխճկանը տուն օնըես, միւրի
զրադ տանըրիս, օզում ըմ փըխճըցընեմ: Պառավը, վըեր չուրըերն
արտեն վըեսկավ լըցալ ա, թա՝ իս լը՞մ կարիլ, էքյուն թըըրհանա
ինձ նհետ տուն ա կլիւական հանե՞, էն բաղը, ուրան հնզըեր
ըխճկեթյն էլ նհետն ըն իննական, ես ուրան առաջ ըմ թցըլա-
կան, վարթը տինիմ ծըեռքըեն, տու վարթին լիրա կըզյիդաս
վըե՞ր ախճիգին ա. ետնան որադ ըմ թցըլական, ուրանց անա
հըրցընեմ, հենց էտ վախտը կըկլաս փըխճըցընըես:

Էքյաը թըըրհանան վըեր թաքավըերեն ախճիգիը տուն ա
կյամ, թա քյիննա բաղը, հնզըերունքը խիլա քամակ ինգյամ ըն

իննում, պառավը եշում ա, տըեսնում Շահ-Մուրադը հրռաքաշ հերանց հետան ծիյավը կյամ ա: Պառավը վարթը տամ ա թաքավը երեխն ըխճըկանը: Վըեր միջրի յել դրաղ ըն կենում, նի յըն մննում բաղը, Շահ-Մուրադը հերան թիուզկան ծիյավը յիրա յա հանում, ըխճըկանը տինում ծիյին յիրա, արտեն ծուվլեն կեսը հըսած, խաբարը նոր հանում ա թաքավը երեխն, թա ըխճըկանը տ փըխճըցըրին: Ախճիգյն էլ ասում ա.—Վըեր իտի ազդուն տղա յըս, թա քըզետե յըս տանում, տար, թա քըզետե շըս տանում, ասե, վըեր ինձ քցիմ ծովը: Շահ-Մուրադը թա՝ ըրիսւին կաց, ինձետե յըմ տանում: Վըեր տուա ա օնում ծուվլեն դրաղը, էն կես մարթ, կես խոզ դովը կյամ ա տրա առալու: Հալա մինչև տրան հանելը Շահ-Մուրադը ըխճըկանը սուվլըցընում ա, թա՝ էն ուրվա տող մարթին քշտին կըկենաս, կըխափիս, նհետն ապրես վուշ, սիրն ու սեկրետը կըգլիդաս, ինձ ասըես, կըհըցընես, ասըես վըերդեղ ա հորիտ, հերան կասըես, թա հոքուտ տըեղն ինձ ասըես, քըզերհետ կապրըեմ, թա չէ, չէ:

Ախճիգյը իտի յել անում ա. դովին հըրցընում ա, թա վըերդեղ ա հորիտ, հինչավ ըս ապրում, ասե, նոր ես քըզերհետ կապրըեմ: Տա թա՝ հորիտ էվնուին մաշին ա: Ախճիգյը թա՝ սոտ ըս ասում, տա թա՝ էսհինչ շուշիին. մաշին ա: Ախճիգյը էլլա թա՝ սոտ ըս ասում: Վերը, տա թա՝ էս ծուվան վըեր անց ըս կենում, ծուվլեն էն դոլին մին թաքավը երպիր կա, էտ երգիրըն էն դոլը էրկու քըերժ կա, էտ քըերժիրը քյինամ ըն կյամ, ուրուր նի կյամ, հըռանում, նորից մուսանում, նորից հըռանում: Էտ քըերժն էն դոլին մին շեյրան կա, տրա փորումն էլ մին յաշիգյ կա, յշիգյումն էլ իրեք ծըետ, իմ հոքիս հենց էտ իրեք ծըտըերն ըն, տահանք քանի վըեր ապրում ըն, ես էլ նհցտնեն ապրում ըմ, տահանք հենց վըեր ըստըկեցին, յա ըսպընեցին, էս էլ նհցտնեն մըեռած ըմ:

Շահ-Մուրադը վըեր քյինամ ա տըեսնում հերան ախապը երբն հերան եշալ յըն, հղի յըն իլալ քյեցալ, ետ ա տըեռնում, կյամ: Ախճիգյը կյամ ա տըրան ասում, վըեր էտ դովըեն հոքին էսհինչ տըեղն ապրող շիյրանըին փորումն ա, յիշիգյին մաշին ապրող ծըտըերեն անում: Շահ-Մուրադը թիուզկան ծին նստում ա, ծովն անց կենում, քյինամ տուա կյամ էտ թաքավը երեխն երգիրը, թաքավը երեխն անա հըրցընում, թա հիշտեղ ա էսհինչ ասրը: Թաքավը երեք արան հըրցը փորց ա անում, գյուղում վըեր տա ուրան ըխճըկանը փըխճըցընող տղան ա: Տա թա վըեր ըխճըկանը կըրի-

շալ ըս փըխնըցընըես, քեզ հալալ, ամժա էտ սարը թյինողը ետ
չի կլամ, իմ զորքաս հիշքան մարթիք ըն քյեցալ, վըել մինը ետ
չի եկալ: Տա թա՝ ես թյինամ ըմ: Թաքավըերը նաև մերան մար-
թիքը օղում ըն վըեր թողըենվուշ, տա թա՝ չէ, վըեր չէ, ես պիտի
թյինամ: Թաքավըերը նաև հերան մարթիքը թա՝ սա պըել ա,
լընք ետ տանք, թյինամ ա, թող թյինամ:

Շահ-Մուրագն ուրան թիգլկան ծին նստում ա, թյինամ էտ
էրկու սարըեն դաթավը քամու մնան անց կենում, տուս կլամ
շիյրանըեն կոշտը, նհետը կոքի անում: Զեյրանը հիշքան օղում ա,
վըեր տրան պուղբարտոկ անըե, ըսպանըե, կարում չի, դուղարն
ա քցնիմ, շատ տիժար շիյրանըեն ըսպանում, փորը ճըղում, յա-
շիդը տուս օնում կոտրում, ծըտըերն մինն ըսպանում: Տա
վըեր մին ծըետն ըսպանում ա, դնվն հերան տանը օժը խիլլա
թնկըցընում ա, ըռանցը սիփառնհնիմ, բուրդան մաննը կծում ա,
գյուղնում պենը հինչումն ա, թաքավըերն ըխնըկանը թա՝ ես իտի
զալաթ ըրած չի, ըրե, իմ սիրն ու սիկրետը պիտի քեզ ասած շի-
նիմ, ըսեցե, լի՞ա հունց ինի, վըեր ծըտըերն մինը սաղ թողե,
վըեր ես մենակ ինձետի կարեմ ապրեմ: Էտ վախտը Շահ-Մուրագը
էրկուինչի ծըետն էլ ա ըսպանում, դնվը լափ ա հալա ինգյունմ:
Մին ծըետն էլ յոր ա օնում, պիրոնմ դնվին տանը պեց թողում,
վըեր լի՞ա տրանավ հերան հետե ապրե, կարե վուշ մարթուցը
վնաս տա, էտ մին ծըետն էլ ախճիդյն ա ըսպանում, դնվը հոքին
փշում ա, մըեռնում:

Շահ-Մուրագն էտ ըխնըկանը յոր ա օնում, տինոնմ թիուրկան
ծիլին յիրա, թյինամ տուս կլամ հերան հորը երգիիրը: Թաքավը-
երը պիրում ա քառասում տղորանցը հրասնեքյը օխտը օր, օխտը
քշեր անում, տահանց փսակում, Շահ-Մուրագն էլ թաքավըեր
տինոնմ, ախպըերքն էլ կլամ ըն Շահ-Մուրագն վըեններն ին-
դյունմ, թա՝ մին զալաթ ա, ըրալ ընք, տիմացալ լընք շերը քու
կլալըտ, մըեզ բախչի, մունք ընք մեղավըեր:

